Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

19168

ԵՄԳՐԻ

Հրատարակութիւն Ղ. Յարութիւնեանի.

ՆՈՐ-ՏԱՂԵՐ

891.99
Ա-50

Арм.
2-4445 ա ԱՄԳՐԻ
831.99
Կռ-50
19 NOV 2010
20 JAN 2006
2-4445 ա գր.

Հրատարակութիւն Գ. Յարութիւնեանի.

ՆՈՐ-ՏԱՂԵՐ

20975

ԲԱԳՈՒ
ՏՊԱՐԱՆ Յ. Գ. ԳԻՒԼԲԱՍԱՐԵԱՆՑ:
1906

19168
0 8002. 2013
20 ЯНВ 2005

Доз. Ценз. 24 Октября 1905 г. Тифлисъ

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ Арм. ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
40679-67

ՄԱՅԻՍ.

1.

Այս ի՞նչ արև է ցոլել հոգույս մէջ իւր պայծառ շողերն,
Որ այս քա՛ն ուրախ, այնքա՛ն երջանիկ բերկրում է իմ սիրտ,
Ի՞նչ արշալույս է իմ հոգույս վրայ սփռել իւր թևերն,
Որ նրբացել են իմ զգացմունքներն՝ և սև և թախծոտ և հիւանդ և բիրտ։
Ո՜, իմ գեղեցիկ մայիսն է գալիս կրկին ժպտելով,
Ծառեր, ծաղիկներն ինձ ողջունում են մի անկեղծ սիրով,
Եւ կանաչ անտառը իւր թարմ ոստերով ինձ երգ է երգում,
Ինձ վարդ է բաշխում և քաղցր ժպիտ գարունն անխռով։

Եւ տանջուած սրտիցս արծուի թևերով թռչում
են հեռու,
Հին ցաւն ու վշտեր և վախկոտ սիրոյս սև յիշա-
տակներն,
Եւ դոցա փոխան մանուկ բնութիւն կենսուրախ
ժպտով,
Նուէր է բերում ինձ մի կուսական բարձր ու
մաքուր սէր։

Ապրիլ 30-ին 1905 թ. Դողս։

2.

Իմ մէջ զարթել է բերկրանքի հոգին,
Իմ մէջ խայտում են յոյսերը ուժգին,
Ես երգեմ երգում և իմ երգի ձայն,
Դիւթում է սիրտս, էութիւնս համայն։
Ինձ հեգ ժպտում են երկինքն ու արև,
Ինձ ողջունում է բողբոջող տերև,
Ու գարունը սփռած իւր նախշուն թևերն,
Ինձ բախշում է յոյս, ինձ բախշում է սէր։
Իմ սիրտս լի է, լի է վառ յուսով,
Ու հոգիս մաքուր երկնառաք սիրով,
Ես երգեմ երգում և երգս ուժգին,
Գեղեցիկ գարնան նուագն է նախկին։

Օ՜, որքան քաղցրես դու, անուշ բերկրանք,
Օ՜, որքան քաղցրես դու, յոյս երկնառաք,
Անապատ սիրտս ձեր ժպտով միայն,
Դարձել է սիրոյ տաճար ու խորան։
Ու ես սիրում եմ կեանքը ջերմ սրտով,
Կեանքն ինձ դիւթում է իւր փարթամ ժպտով,
Շուրջս կենսուրախ, սիրտս կենսուրախ,
Ու ես երգում եմ հոգոյս հնչուն տաղ։

Մարտ 1-ին 1905 թ. ձեմ.

3.

Իզուր ես ողբում, ա՛յ լիմար ազատ,
Քո ձայնն իմ սրտում վիշտ չի զարթեցնում,
Բերկրանքը իմ մէջ յարութիւն առաւ,
Իմ սրտում մի նոր գարունէ ծաղկում։
Գարուն է ծաղկում, ու սրտիս զեղմունք,
Հոսում է արագ, հոսում է առատ,
Ինչպէս, որ գարնան վտակն է հոսում,
Ափերը ծածկած, հպարտ ու ազատ։
Ու ինձ երգում են մոծակն ու մորեխ,
Ու ինձ երգում են ճնճղուկն ու սարեկ,
Ու ինձ երգում է բնութիւնը սիրահեղ,
Ու զուարթ գարուն, գարունը նորեկ։

Ես էլ եմ երգում, երգում եմ ուրախ,
Մի տիեզերք է իմ ամբողջ հոգին,
Ուր վառ բերկրանքի շողերն են փայլում,
Լի քաղցր կրքով, հրճուանքով ուժգին։
Իզուր ես ողբում, ա՛յ լիմար ագռաւ,
Քո ձայնն իմ սրտում վիշտ չի զարթեցնում,
Ինձ հաշտ ժպտում են գարունն ու հարաւ,
Իմ մէջ բերկրանքի յաղթ ձայնն է թնդում։

Մարտ 5-ին 1905 թ. Ճեմ.

4։

Ժպտում են ալիք, խայտում են ալիք,
Խաղաղ երկինքն է նայում զմայլած,
Սիրտս սիրաղեղ, սիրտս սիրով լիք,
Ոսկի երազով յուսով է տարուած։
Եւ ես զգում եմ, որ կը գայ մի օր,
Մռայլած սրտերն կը պարզեն մեկից,
Ու քաղցր բաղդը ժպտով մեղրածոր,
Աշխարհը կշտապէ պարզ սրտի խորքից։
Հոգիների մէջ կիշխէ մաքուր սէր,
Հոգիներն իրար կը ժպտեն ուրախ,
Ինչպէս ժպտում են երկինք, ալիքներ,

Եւ սիրտս հանգիստ և հոգիս խաղաղ։

Մարտ 10-ին 1905 թ. ճեմ.

5.

Կանգնած եմ հպարտ, բարութեան ժպիտն իմ աչքերիս մէջ.
Լի վէհ երկնային մաքուր խոհերով և հոգով բարի,
Իմ ոտքերի տակ դաժան չարութիւնն վրէժովն անշէջ,
Գալարւում է լուռ, լքուած իմ ուժից, իմ ուժին գերի։
Եւ մի համարձակ, մի մեղմ, քնքուշ ձայն տնուշ շեշտերով,
Միշտ փսփսում փաղաքուշ խօսքեր իմ ականջի վեր,
«Դու բաղդաւորես, մեծ ես, անսասան տիեզերքի զարդ,
«Քո մէջն են ծաղկում բարութեան ծաղիկ, յոյս, հաւատ ու սէր,
«Եւ մաքուր հոգուդ՝ զգւում է հանդարտ փափուկ շնչիկով,
«Գոհունակութեան, լի երանութեամբ մատաղ զգացմունք,

«Ինչպէս զգուում է հովը փափկաթև վաղ առաւօտեան,
«Ծառի սաղարթներն, առուի հայելին և դաշտի ծաղկունք։

Մարտի 21-ին 1905 թ. ձեմ.

ԽԱՉԵՑԵԱԼԻՆ։

Մունջ ըստուերներով սքողված գիշեր
Սփռում է դարձեալ իւր խաւար գիշեր,
Հնչում են զանգերը տխուր, ողբաձայն,
Լալիս է երկինքը մեղմ ու լռելեայն։
Եւ հորիզոնի հեռու խորքերում
Փայլակն է յանկարծ մէկ մէկ գալարւում,
Եւ ցցուած լեռներն սգաւոր դէմքով,
Նայում են երկրին ալեհեր գլխով։
Եւ խաւարի մէջ պատուհաններից
Խուլ անկիւնների փողոցի ծայրից,
Լոյս են տարածում աղօտ լապտերները,
Տխուր է երկինք, տխուր է գիշերը։
Եւ հանդիսաւոր, դանդաղ քայլերով
Գնում են մարդիկ դէպի ժամատուն
Նուէր բերելու ողբացող սիրով

Իրենց աղօթքը երկնքին արթուն։
Իսկ ես կանգնած եմ, նայում եմ անթարթ,
Իւ իմ յուշերն էլ սև քողեր ձգած
Գալիս են հանդարտ, գնում են հանդարտ
Մի խուլ, մի խաղաղ վշտով համակուած։
Ու ես տեսնում եմ իմ հոգուս աչքով,
Թէ ինչպէս անսիրտ ու բիրտ զինուորներն
Ծաղրում են Փրկչին փշեայ պսակով
Երեսին տեղում թուք ու ապտակներ։
Ու ես տեսնում եմ, թէ ինչպէս քրտնած
Դէպ վեր է տանում նա իւր ծանր խաչ,
Մերձաւորների սրտերը բեկուած
Խեղդում է վիշտը և ծանր հառաչ։
Ու ես տեսնում եմ, թէ ինչպէս նոքա
Անմիտ ամբոխի բազմութեան միջին
Լալիս են մեղմիկ, լալիս են լքուած,
Լալիս են անվերջ, լալիս դառնագին։
Եւ թէ նա ինչպէս համակուած սիրով
Ասում է նոցա դողդոջուն ձայնով
«Լացէք ձեր վրայ, ես արի անձայն
«Կը տանեմ խաչս մինչև գերեզման։
Տեսնում եմ նաև, ինչպէս նա գթած
Բարկ արևի տակ մոռացած իւր ցաւ
Աղօթք է անում մարդկութեան ընկած,

Հոգին աւանդում տակաւ առ տակաւ։
Եւ գլուխը թեքած սիրաղեղ կրծքին
Ձեռներն ու ոտքերը արիւնով ներկած
Նա պահ է մնում խաղաղ գիշերին
Վառ աստղերի տակ լուռ, բազկատարած։
Կրկին գիշեր է ու խաղաղ գիշեր,
Սև սուգ են մտել երկինքն ու երկիր,
Սև սուգ են մտել նաև իմ յուշեր,
Եւ արտասուում եմ դառն ու վշտալիր։
Եւ իմ շրթներից սահում են դարձեալ,
«Լացէք ձեր վրայ աշխարհի որդիք,
«Ձեզ համար մեռաւ Տէրը խաչեցեալ,
«Մահով ջնջելու ձեր դատակնիք,
«Բայց դուք մտքով կոյր, կոյր նոյնպէս հոգով
«Գնում էք անշեղ դէպի կործանում,
«Եւ անգիտակից ձեր ծանր բաղդին
«Դուք ձեր պապերի արածն էք անում։
»Դուք դարձեալ արդար արեան ծարաւի
«Խաչ էք պատրաստում անմեղի համար,
«Ձեր մտքերը ծախած կասկած ու դաւի
«Մեղքեր էք գործում ծանր ու անհամար։
«Լացէք ձեր վրայ, դուք էք մոլորուած,
«Մեղքի ու մահուան սողացող գերին,
«Լացէք ձեր վրայ դուք խսպառ ընկած

«Չէք ուզում ազատ տեսնել ձեր հոգին»։

Ապրելի 14-ին 1905 թ. ձեմ.

ԵՐՋԱՆԿՈՒԹԻՒՆ։

Իմ զուարթ հոգին ծաղկում է մեղմիկ,
Քաղցր բերկրանքի շամանտաղի մէջ,
Ինչպէս ծաղկում է մայիս անուշիկ
Պայծառ երկնի տակ պարզ ու սիրատենջ։
Իմ վառ զգացմունք ինձ բաշխում է սէր,
Գոհունակութեան ժպտով ողողուած,
Ինչպէս բուրում են մայիսի վարդեր
Սիրող երկնքի արցունքով ցողուած։
Իմ սիրտ, իմ հոգին հիւսում են ուրախ
Երջանիկ երգեր քաղցր ու ներդաշնակ,
Ինչպէս մայիսին անհոգ ու խաղաղ
Երգ է մրմնջում փրփրադէզ վտակ։
Ես երջանիկ եմ, իմ մէջ կայ գարուն,
Առողջ զգացմունք և մաքուր յոյզեր,
Եւ անխռով սիրտ, և հոգի ժպտուն,
Եւ խաղաղութիւն և անուշիկ սէր։

ապրելի 23-ին 1905 թ. ձեմ.

ԻԶՈՒՐ ԹԱՓԱՌՄՈՒՆՔ։

Վաղ առաւօտից մինչև երեկոյ
Թիթեռը պարեց առուակի ափին,
Եւ իւր հիացմունք և իւր մաքուր սէր
Բաշխեց բազմագոյն նուրբ ծաղիկներին։
Վաղ առաւօտից մինչև երեկոյ
Եւ ես շրջեցայ առուակի ափին,
Սէրս երգեցի սիրտս բացեցի
Ցողազարդ, չքնաղ, վառ ծաղիկներին։
Թիթեռը հարբած սիրոյ նեկտարով
Թաղուեց գեղ ծաղկի նուրբ բաժակի մէջ
Երբ մութ գիշերը իւր սև թևերով
Երգ, խնդ ու ժպտին կրկին տուաւ վերջ։
Իսկ ես, օ մենակ շրջում եմ դարձեալ
Գալար ոստերի, ըստուերների տակ,
Ու դժգոյն լուսին դէմքով կիսափայլ
Նայում է վրաս ամպերի միջով։
Ու ես անընկեր, ու սէրս անքուն
Սրտիս ծանր վիշտ, սրտիս ծանր դող
Լուռ բողոքում եմ լուսնեակին դժգոյն
Ու այդպէս գրկում սառն ու խոնաւ հող։
Ու թռչող մայիսը նախշուն թևերով
Տանում է իւր հետ իմ վառն երազներ,

Իմ քաղցր երգերը՝ լի բարձ խանդով,
Եւ առողջ սրտիս վառ ու մաքուր սէր։
Եւ առանց ընկեր և առանց մայիս
Մնում եմ ընկած ըստուերների մէջ,
Գիշերն ու ըստուերը տիրում են սրտիս
Լռակեաց թախծի բողոքով անվերջ։

Յունիսի 1-ին 1905 թ. Կոշ.

ԵՐԿԱՐ ՃԱՆԱՊԱՐՀ.

Մենակ գնում եմ երկար ծանապարհ,
Արտերի միջով կանաչ ու սիրուն,
Ինձ ժպտում է հեզ երկինքը պայծառ,
Եւ ծաղկեպսակ գեղեցիկ գարուն։
Եւ մացառների թաւ ըստուերի մէջ
Արտոյտն է երգում քաղցր դայլայլով,
Եւ կանաչ, ծաղկած սեղ ափերի մէջ
Առուն է ժպտում երկնացոլ փայլով։
Երգիր, արտուտիկ, իմ ազատ թռչնիկ,
Երգել քեզ արժէ անհոգ, անվհեր,
Քանի քո երգիչ և սիրող սրտիկ
Քեզնից զատ չունի ոչ իշխան, ոչ տէր։
Քանի կենսուրախ և զուարդ բնութիւն

Հպում է մեղմիկ սրտիդ լարերին,
Ու ծովածածան արտը կանաչած
Քեզ ձայնակցում է ուրախ, ցնծագին։
Քանի քո սրտում գարունն ու երկինք
Անդրացոլում են իրենց վառ շուքով,
Ապա այն տեղից իբրև դայլայլիկ
Կրկին հնչում են լի հիացմունքով։
Իսկ մենք, օ վայ մեզ չար մտքով լեցուած
Սովրել ենք միմիեանց որսգայթ լարել,
Անխիղճ, անզգայ և պատուով ընկած
Լոկ գիտենք արիւն թափել ու ծծել։
Ու մեր վեհ կոչման բարձունքից խաղտուած
Ցած ենք գլորուում դէպի խոր անդունդ,
Մեր առաջ սարսափ արիւն ու չարիք
Սփռում գնում ենք իզուր անօգուտ։
Եւ աչք դարձրած գարնան գեղ ժպտից
Մենք աչք ենք ուղղել տեսի արեան դաշտ
Ուր անմիտ կերպով, սրտով թունալից
Միմիեանց են ջարդում կատաղած ու անհաշտ։

Մայիսի 29-ին 1905 թ. Կոշ.

ԴԷՊԻ ԼԵՌՆԵՐ։

Դէպի լեռնե՞ր, դէպի լեռնե՞ր,

Ուր տօթակէզ այս օրերին
Հանգիստ ու զով բաշխում է մեզ
Անուշաբոյր լերան քամին։
Դէպի լեռնե՞ր, դէպի լեռնե՞ր,
Ուր ձիւնի շերտը իւր գրկի մէջ
Թագցնում է դեռ ձնծաղիկ
Առուն՝ ճերմակ փրփուրի շեղջ։
Ու դալարուն բլուրն ի վեր
Բարձրանում են հօտի շարքեր,
Ու անսասան՝ ժայռի ծայրին
Երգ է երգում քաջ հովուհին։
Օ՜, տեսել է՞ք երբ և իցէ
Երազների այն թագուհուն,
Որ օժտուած երկնի գեղով
Խռովում է ձեր հանգիստ քուն։
Կամ նիրհել է՞ք առուի ափին,
Անտառի մէջ սաղարթախիտ,
Եւ սրբազան շուշիկներին
Ձայնակցել է ձեր անհոգ սիրտ.
Կամ շոհե՞լ է ձեզ հեւալով
Թարմ ուռենու ոստը ճկուն.
Կամ ժպտե՞լ է ձեզ, դողալով
Մի լերան լիճ ջինջ ու սիրուն։
Կամ տեսել է՞ք նորա գրկում

Այն երկնապանծ սէգ գագաթներն,
Որ ծրարուած խիտ ամպերում
Նայում են միշտ լուռ դէպ վեր։
Եւ կամ երկնի այն բարակ շերտ,
Որ լեռների ծայրին կուլ թնած
Ժպտում է ձեզ երեկոյեան
Հազարերանգ գոյնով ներկուած,
Կամ այն ժպտուն արձակ արօտ,
Լանջին առատ ծաղիկ ու ցող,
Կուսի նազուկ քայլին կարօտ
Սպասելես միշտ սիրադող.
Օ՛, այդ բոլորը, ո՜ այդ բոլորը
Հովուհին է իր մէջ պահում,
Ու նրանցով ողջ օրն ի բուն
Նրա սիրտն է ուրախ խնդում։
Ու երգում է, և նորա երգ
Քաղցր է ինչպէս նորա համբոյր,
Ու երգում է, և նորա երգ
Ունի սիրոյ կնդրուկն ու բոյր։
Նա երգում է. ու երգի մէջ
Ծաւալում են բերկրանք ու խինդ.
Նա երգում է. ու երգի մէջ
Թռթռում է իւր բիւրեղ սիրտ։
Ու կենսաբուխ, այդ ծաղկի շուրջ

Ոստոստում են և թիթեռներն,
Ու վարսերից միշտ կախ ընկած
Խաղ են անում զով քամիներն։
Օ՛, իմ անո՛ւշ ի՜նչ բաղդ, ի՜նչ խինդ,
Որ ես էլ այդ հովերի պէս
Գողանայի դէմքիտ ժպիտը
Վզովտ ընկած ու քեզ անտես։
Կամ թիթռան պէս շուրջդ ընկած
Արեգագի շողերի հետ
Պաշտէի քեզ բազկատարած
Սիրոյս խնկովն երջանկաւէտ . . .
Դէպի լեռնե՛ր, դէպի լեռներ,
Ուր տօթակէզ այս օրերին
Հանգիստ ու բոյր բաշխում է մեզ
Միշտ զովաշունչ լերան քամին։
Ու. դեռ անկոխ, ու նորաբաց
Առուակների չորս դեն խմբուած
Մեզ կընդունեն վառ ծաղիկներն
Անկեղծ ժպտով, սիրանուէր։

Յուլիսի 1-ին 1905 թ. Կող.

ԿԷՍ ԳԻՇԵՐԻՆ.

Կէս գիշեր է, ու լուսինն է նոր ծագում,

Ծառերի մէջ բուն է տխուր խուլ երգում,
Ու սև բուի տխուր ձայնի արձագանգ,
Զարթեցնում է սրտիս վիշտը խօլ, վայրագ։
Ես շրջում եմ կտրի վրայ սրտաբեկ
Ցուրտ կսկծի ցուրտ քրտինքով լոգացած,
Ու ներքևը ինձ պէս վախկոտ ու բեկ-բեկ
Դողդողում են ըստուերները համբացած։
Ու տերևոտ մացառները հովի հետ
Ողբ են անում այնքան կամաց ու դող դող,
Որ սարսափած լռիկ մնջիկ քայլուածե՛տ
Ձայն չեն հանում ճպուռները միշտ անխոնջ։
Ու դալկացած թաւալում է լուռ լուսին,
Սիրոյ դալուկ երազներով ծանրացած,
Ու ոսկեհեր աստղերի հետ միասին
Նայում է խորը իմ սրտիս մէջ խոցոտուած։
Ու ըստուերս իմ սիրոյս պէս միշտ վախկոտ
Սղոսկում է իմ ետևից դեռնամած,
Ու լռութեան այս խուլ ժամին մեռելկոտ
Սիրոս է լալիս սիրուն աչքից վերք առած։
Ու շրջում եմ և երազում անդադար,
Կէս գիշերին երկնքի տակ անսահման,
Ու շրջում են ինձ հետ լռին դալկահար
Եւ իմ ըստուերը և իմ վերքերն անդարման։

Յուլիսի 15-ին 1905 թ. Կոշ.

ԳԹԱՑԷՔ ՍՈՅՍ...

Գթացէք սոցա, անտուն անտերունջ
Երջում են քաղցած աշխարհէ աշխարհ,
Զոր հացի կարօտ, շրթներին տրտունջ
Անէծք են կարդում բաղտին անդադար։
Գթացէք սոցա, տնից զրկուած
Մեռնում են մահով դառն տանջանքի,
Չեն ձգտում սոքա ուժերով լարուած
Ո՛չ հարստութեան և ո՛չ սին փառքի։
Գթացէք սոցա, ցրուած ամեն տեղ
Բաժին են դառնում բռնաւոր ուժին,
Գիշեր ու ցերեկ միշտ ու ամեն տեղ
Սպառում են մահուան ահաւոր գուժին։
Գթացէք սոցա, սոքա ձեզ նման
Ունեն և հոգի և սիրտ և պատկեր,
Չեն ծնուած գրկել սառն գերեզման,
Այլ զգալ, գործել, սիրել և ցոյց տալ սէր։
Գթացէք սոցա կը հասնի ժամը,
Կը լեցուի բաժակը դառն տանջանքի,
Ու փշրող ուժով կը ժայթի ահա
Հսկայ տրտունջը արնոտ բողոքի։
Ու այն ժամանակ սուր, հուր ու աւեր
Կը գան ասպարէզ գործելու ազատ,

Ու այն ժամանակ ո՛չ գութ և ոչ սէր
Չեն կարող փրկել երկիրն անապատ։
Գթացէք սոցա, սոքա փնտռում են
Լոկ ազատութիւն, քրտինք ու վաստակ,
Ու իրենց գլխի, կայքի ազատ տէր
Ուզում են անկախ ապրել երկնից տակ։

Յուլիսի 29-ին 1905 թ. Կոշ.

ՀԵԾԿԼՏԱՆՔ.

Ցուրտ փչեց. ծառերը դեղնեցին,
Հաւքերը շարաններ կազմեցին,
Ցուրտ փչեց, ծաղիկներն թոռմեցին,
Հաւքերը ողբաձայն երգեցին։
Հովն եկաւ,տերևները տարաւ,
Ամպն եկաւ ու բերկրանքս կորաւ,
Ախուր է գալիս է սև գիշեր,
Վարդ ծաղկեց մնացին լոկ փշեր,
Լալիս եմ, իմ լացիս պատասխան,
Լինում է ցուրտ քամու տխուր ձայն։
Դեղնել են դաշտերը սար է սար,
Ամեն տեղ թախիծ է հաւասար,
Իմ սրտիս ձայները դալկահար

Հեծում են հոգուս մէջ անդադար։
Անժպիտ, դեղնորակ ու ցաւոտ
Բացւում է մօտ աշնան առաւօտ,
Ըստուերներն սգաւոր գետնամած
Հալւումեն առանց ձայն ու կամաց։
Ըստուեր էր և կեանքիս քաղցրութիւն,
Հալուեցաւ անայդ ու իրիկուն,
Սև ամպեր դիզուելեն իմ սրտիս
Պիտ, խամրիմ, իզուր եմ արդ լալիս։

Օգտ. 18 1905 թ. Կոշ.

ՄԱՅՐՆ ՈՒ ՈՐԴԻՆ.

Սուլում է քամին դաշտերի միջով,
Սրտադող ծառերը ողբում են կամաց,
Երկիրը ծածկուած ձիւնի հաստ շերտով
Կապոյտ երկինքը սև սուգ է մտած։
Ու սառած գետի ցից ժայռոտ ափին
Գիւղի մի ծայրում մի խարխուլ տնակ
Ըստուերների մէջ թաղուած բնաւին,
Կանգնած նայում է թագուն ու մենակ։
Ու ներսը դողդոջ ճրագի լուսով
Լուսաւորւում է մի դէմք սպառնած,

Աչքերը կիսաբաց, ու մարած լուսով
Նայում է մանկան կրծքին մահացած։
Ու դռան ճեղքով անլուռ ու ջղոտ
Սուլում է քամին զայրոյթով լեցուած,
Ու ճրագի բոցը տողդոջ ու աղօտ
Փողում է կարծես վախից սարսափած։
Կարծես ասում է այդ վախով մեղմիկ
«Հանգիր տառապող, էլ չարժ է ապրել,
«Էլ չարժ է ապրել քանի մաքուր սէր
«Էլ չի բողբոջում մաքուր սրտերում,
«Էլ չարժ է ապրել քանի մամոնան
«Աշխարհի սանձը իւր ձեռքում ժողուած
«Դարձրել է երկիրս արեան մի ովկեան,
«Ու ինքն է այժմ գերիշխող աստուած.
«Հողը հիւրասէր իւր կրծքով փափուկ
«Քեզ կը տայ հանգիստ, վշտերիտ վախճան.
«Այն տեղ էլ չկայ այս կեանքը անձուկ
«Գնա՛ ու հանգիր այն տեղ յաւիտեան»։
Սուլում է քամին դռան ճեղքերով,
Փողում է լոյսը աղօտ ճրագին,
Մեռնում է մայրը լի խոր ցաւերով
Իւր մեռած որդուն պինդ սեղմած կրծքին։

Դեկ. 24-ին 1905 թ. Ձեմ.

ՏԵՆՉԱՆՔ.

Բացուիր արշալոյս.
Հոգիս վշտահար յուզուում է ինչպէս ալեկոծուած
ծով,
Անքուն, վաստակած.
Մթութեան մէջ է սուզուած իմ հոգին.
Անորոշութիւնն երկար ժամանակ կապար ձեռներով
Փշրում է իմ սուրբ, իմ մանկութիւնից ժառան-
գած խոհերն.
Բացուիր արշալոյս.
Սենեակս աղօտ՝ երազուն լուսով խսպառ դալկացած
Մահուան խոհեր է կանչում հոգուս մէջ նոր
կենդանութեան,
Դուրսը լռութիւն.
Լուսինն է անցնում ամպերի տակով
Եւ ձիւնն աշխարհին իւր ցուրտ սաւանով վաղուցէ
ծածկած։
Բացուիր արշալոյս.
Խոր լռութեան մէջ երազող հոգիս
Վաղուց է տարուած սև միստիքայի միդապատ
աշխարհը
Եւ մեղմ հարուածներն իմ սիրող սրտիս
Վաղուց են խփում դանդաղ ու տկար։

Ծարաւ եմ լուսի, բացուիր արշալոյս,
Բացուիր քո ժպտով թող ցրուին խոկերն
Իմ տանջուած մտքից.
Ու քո կենսատու, խաղաղ կուսական, թարմ ժպիտ-
ներով
Քշիր մռայլոտ վշտի ամպերը իմ հոգուս խորքից։
Բացուիր արշալոյս, հոգիս կարօտ է, կարօտ է վա-
ղուց ոսկեհեր լոյսի,
Ու լոյսից ծնուող, լոյսի մէջ ապրող հաւատ ու
յոյսի։

Դեկ. 15-ին 1905 թ. Ճեմ.

ԻՄ ՀԻՆ ՎԻՇՏԸ.

Ո՞վ է այսպէս խուլ գիշեր ժամանակ
Ողբաձայն երգում պատուհանիս տակ.
Ո՞վ է, որ վշտին այն սև օրերի
Ուզում է հոգիս դարձնել գերի,
Մինչ դեռ ալեկոծ հոգիս խռոված
Աղօթք է անում կարօտ հանգստին.
Ու խոստումներից շարունակ խաբուած
Սիրտս նիրհել է ուզում վերստին։
Օ՜, սա հին վիշտն է իմ դառն օրերի,

Որ սև թևերով իմ հոգիս գրկած
Ինձ ողբ էր երգում ծայնով բուերի
Սւերակների սուգ գրկում սոված։
Հազիւ էր տասն օր իմ սիրտս ուրախ
Մալիս ամսուան ողջունել երգով,
Եւ հոգիս թաղուած մտորմունքի մէջ
Հազիւ էր տասն օր ապրել հանգստով։
Բայց այս օր դարձեալ գիշեր ժամանակ
Հին վիշտս է երգում պատուհանիս տակ,
Մինչ սև գիշերը ազդում է սարսուռ
Ու դուրսը անձրև մաղւում է խիստ լուռ։
Սրի՛, իմ խեղճ վիշտ, սիրտս կրկին բաց
Պատրաստեմ գրկել քեզ աչքերով թաց,
Գիտեմ ծեծեցիր դռներ անհամար
Բայց ապաստանի քեզ չգտար ճար,
Սրի՛, իմ հին վիշտ դու ունիս մեծ տեղ,
Իմ սիրտն ու հոգին քեզ համար են լոկ,
Իզուր ձգտեցայ միշտ ու ամեն տեղ
Քաղցր հաճոյքից խսպառ չգալ պոկ։
Դուրսը խաւար է, անձրև է գալիս,
Պատուհանիս տակ իմ վիշտն է լալիս,
Ու այդ որբիկին մերժուած աներես
Սիպսուած կրկին ես առնում եմ ներս։

Մալիս 18-ին 1905 թ. Կոշ.

ՍԵՒ ԲԱՂՁԱՆՔ.

Գիշերուայ կէսն է.
Ու ժամացոյցը խփում է արդէն ուղիղ տասներկուս
Գիշերուայ կէսն է,
Ու ըստուերները խեղդել են իսպառ ցերեկուայ
լոյսը.
Ու մունջ խաւարի լուռ թևերի տակ
Նիրհում է աշխարհը վաստակած իսպառ,
Ու նրա վերևը երկինքը կապուտակ
Վառել է աստղեր անթիւ ու պայծառ։
Բայց ես քուն չունիմ, լցուած է հոգիս,
Ու լալիս ուզում լռին ու մենակ,
Բայց ես քուն չունիմ, արցունք չի գալիս
Ու ես տանջւում եմ, տանջւում շարունակ։
Դու, որ ստեղծել ես հոգին ու յոյզեր,
Ու վշտին տուել կապարի թևեր,
Ու սրտի խորքում շնչել ես կսկիծ,
Ու քողարկել ես մեր «ուր»ն ու «ուսկից»
Ու միշտ գաղտնապահ, հեռու մեզանից,
Խաղում ես երկնի, երկրի բաղտի հետ,
Այս խաւարի մէջ քո հեռու տեղից
Խորտակիր սիրտս ու հոգիս յաւետ։
Ու ծագող օրուայ հուր թևերի տակ

Թող էլ չտեսնէ իմ աչքն այս աշխարհը,
Ես կուզեմ սրտով խոնաւ հողի տակ
Պառկել ու քնել, քնել դարէ դար։

Սեպ. 23-ին 1905 թ. Ձեմ.

*
* *

Ո՞ւր ես, իմ հանգիստ, գնացիր անցար,
Իմ սև յոյզերից իսպառ հալածուած,
Իմ հոգուս համար իսպառ չքացար,
Թողնելով իմ սիրտը դադարկ ու հոգնած։
Այդպէս մտնում է արևը աշնան,
Եւ յաջորդում է գիշերը խաւար,
Փչում է քամին, ծառերը դեղնած
Լալիս են յուզուած ու միշտ վշտահար։
Եւ այդպէս անցորդը տնից հալածուած
Այրերի մէջն է փնտռում ապաստան.
Իջնում է անձրև, անձրևը խիստ յորդ,
Ու լալիս են խուլ քամիներն աշնան։
Զորս կողմը գիշեր, չորս կողմը խաւար,
Իւր ներսը յուզուած, տնից հալածուած,
Դուրսը յորդ անձրև և ոգը անդադար,
Իւր ներսը փղձկող տենչերով լեցուած։

Ո՞ւր ես, իմ հանգիստ, գնացիր՝ անցար,
Իմ սև յոյզերից սաստիկ հալածուած,
Իմ հոգուս համար խպառ չքացար,
Թողնելով սիրտս դատարկ ու լքուած։

Փետր. 28-ին 1905 թ. Ճեմ.

ԱՖՐՈԴԻՏԷԻ ՊԱՏԿԵՐԸ.

Գեղեցիկ պատկեր, անուշիկ պատկեր,
Ես սիրում եմ քեզ ամբողջ սրտով,
Այդ մեղմ ժպտիդ մէջ ուզում է հոգիս
Ապրել անսահման, երջանիկ սիրով։
Ապրել ու երգել, երգել ցնծագին,
Ինչպէս արտոյտը մացառների մէջ,
Ինչպէս ծաղիկը առուակի ափին,
Ինչպէս թիթեռը վառ շողերի մէջ։
Օ՜, դու չգիտես թէ ինչքան սեղուն
Ինչքան ներդաշնակ հնչում են մեղմիկ
Սրտիս լարերը խոր ու զգալուն,
Երբ ես հառում եմ աչերիդ քաղցրիկ։
Այդպէս երգում է անուշ ու քաղցրիկ.
Վաղ առաւօտեան անտառը ցողուած,
Երբ զով զեփիւռը իւր շնչով հեզիկ

Սէր է փսփսում բուրմունքով լեցուած։
Այդպէս երգում է ծովը խաղաղիկ
Երբ թեթև հովն է լուռ գգւում նրան,
Եւ մեղմ և մարմանդ դողդոջուն ալիք
Դէպ ափն են դիմում երգով քաղցրաձայն։
Այդպէս երգում է արձանը Մեմնոնի,
Երբ ծագող արևը նախկին շողերով
Հպում է նրան սիրով կենդանի
Եւ գգւում անկեղծ, անխարդախ սիրով։
Այդպէս երգում է և ողջ բնութիւնն
Երբ չքնաղ գարունը նոր ետ է գալիս,
Եւ երգ և ժպիտ ծաղկանց հետ սիրուն
Նորան վերստին պարգև է տալիս։
Օ՜ դու չգիտես, աննման պատկեր
Ինչե՜ր են ծնւում հոգուս խորքերից,
Երբ քեզ եմ ուղղում իմ հայցող աչեր
Իսկ դու ժպտում ես քաղցր ու խանդալից։

Մայիսի 6-ին 1905 թ. Դողս.

ՎԵՐՏԱՌՈՒԹԻՒՆ

Մարող շողի հետ նազելի ծաղիկ
Դէպ, հողը թեքեց իւր թոռմած գլխիկ.

Մահաբեր շնչով հասաւ ցուրտ գիշեր,
Ու թոռմած ծաղկի մնացին փշեր։
Ու սիրոյս քնքուշ ծաղիկը նախկին
Թափեց շատ շուտով իւր թերթերն անգին,
Երբ ժպտով սիրոյ քաղցր ակնարկներ
Ունեցան իրենց յուսախաբ գիշեր։
Արդէն վաղուց է այդ ծաղկի փշեր
Տանջում են հոգիս ցերեկ ու գիշեր,
Ու գերեզմանի ցուրտ երաշներով
Լեցնում են հոգիս դառն երկիւղով։

Նոյեմբերի 6-ին 1903 թ. Ձեմ։

ՀՀ Ազգային գրադարան
NL0322645

2-444